ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ

2019-2021թթ. ՀՆԱ-ն (ընթացիկ գներով) և ՀՆԱ-ի ծավալի ինդեքսները (%)

Արտադրական եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի տարեկան տվյալները, ընթացիկ գներով, մլն.դրամ




ՀՆԱ-ի ծավալի ինդեքսները՝ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի նկատմամբ, %




2021թ. արտադրական եղանակով հաշվարկված ՀՆԱ-ի նախնական տարեկան ցուցանիշը ընթացիկ գներով կազմել է 6 տրիլիոն 982 մլրդ 848.6 մլն դրամ, 2020 և 2019 թվականների համապատասխանաբար՝ 6 տրիլիոն 181 մլրդ 664.1 մլն և 6 տրիլիոն 543 մլրդ 321.8 մլն դրամի պարագայում: 2021թ. ՀՆԱ-ի իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատությամբ կազմել է 105.7%, 2020 և 2019 թվականների համապատասխանաբար՝ 92.6%-ի և 107.6%-ի պարագայում:

Տեղեկատվության աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները՝ ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ ամսեկան տեղեկագրերը:

ԱԺԲԳ

# ՏԵՂԵԿԱՆՔ
## 2020-2022թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %










Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2022թ. հունվարին 2021թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 115.4%, 2021թ. հունվարին 2020 թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 91.5%, իսկ 2020թ. հունվարին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 109.2%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվարին կազմել է 177 մլրդ 688.2 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 40 մլրդ 349.9 և 33 մլրդ 541 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվարին կազմել է 14 մլրդ 114.8 մլն. դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1 մլրդ 548.5  և 2 մլրդ 268.5 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2022թ. հուվարին կազմել է 230  մլրդ 850.3 մլն.դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 43 մլրդ 917.3 և 23 մլրդ 521,1 մլն. դրամով. իսկ այլ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվարին կազմել է 156 մլրդ 716 մլն.դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 26 մլրդ 916.1 և 5 մլրդ 239.9 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվարին 2021թ. հունվարի նկատմամբ կազմել է 116.6%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև  2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 89.2%-ի և 113.4%-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2022թ. հունվարին 2021թ. հունվարի նկատմամբ կազմել է 103.0%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.8%-ի և 107.7%-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)







Առևտրի շրջանառության իրական աճը 2022թ. հունվարին 2021թ. հունվարի նկատմամբ կազմել է 111.5%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 84.9%-ի և 110.3%-ի պարագայում. իսկ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվարին 2021թ. հունվարի նկատմամբ կազմել է 121.2%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 89.7%-ի և 113.4%-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվարին կազմել է 52 մլրդ 953.3 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 13 մլրդ 315.8 և 19 մլրդ 613.8 մլն դրամով:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվարին կազմել է 89 մլրդ 280 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 20 մլրդ 826.4 և 6 մլրդ 535.8 մլն դրամով:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվարին կազմել է 33 մլրդ 508.1 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 12 մլրդ 987 և 7 մլրդ 182.1 մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվարին կազմել է 1 մլրդ 946.8 մլն դրամ, ինչը 2021թ. և 2020թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 250.2 և 209.3 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվարին 2021թ. հունվարի նկատմամբ կազմել է 99.1%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 96.1%-ի և 138.7%-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվարին 2021թ. հունվարի նկատմամբ կազմել է 125.1%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 81.7%-ի և 107.6%-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվարին 2021թ. հունվարի նկատմամբ կազմել է 121.3%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.5%-ի և 109.1%-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2022թ. հունվարին 2021թ. հունվարի նկատմամբ կազմել է 108.2%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 99.5%-ի և 88.9%-ի պարագայում:

ԱԺԲԳ

## Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)




## Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ







Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվարին կազմել է 20 մլրդ 640.4 մլն դրամ, ինչը 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 411 մլն դրամով, իսկ 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 14 մլրդ 727 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվարին կազմել է 31 մլրդ 813,9 մլն դրամ, ինչը 2021 և 2020 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 6 մլրդ 644,2 և 9 մլրդ 263.1 մլն. դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2022թ. հուվարին կազմել է 39 մլրդ 373,1 մլն դրամ, ինչը 2021 և 2022 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 2 մլրդ 856.5 մլն և 854,2 մլն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվարին 2021թ. հունվարի նկատմամբ կազմել է 104.2%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 66.8%-ի և 103.5%-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվարին 2021թ. հունվարի նկատմամբ կազմել է 126.3%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 112.7%-ի և 109.6%-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2022թ. հունվարին 2021թ. հունվարի նկատմամբ կազմել է 99.2%, 2021 և 2020 թվականների, ինչպես նաև 2020 և 2019 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 111.0%-ի և 110.9%-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2022թ. հունվարին 2021թ. հունվարի նկատմամբ կազմել է 107.1%, 2021թ. հունվարին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 104.5%, 2020թ. հունվարին 2019թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 100.2%: ՍԳԻ-ն 2022թ.հունվարին 2021 թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 101.6%, 2021թ. հունվարին 2020թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 102.2%, 2020թ. հունվարին 2019թ. դեկտեմբերի նկատմամբ՝ 101.3%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2022թ. հունվարի վերջի դրությամբ կազմել է 1 տրիլիոն 144 մլրդ 135 մլն դրամ, ինչը 225 մլրդ 907 մլն դրամով կամ 24.6%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 157 մլրդ 654 մլն դրամով կամ 16%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2022թ. հունվարի դրությամբ կազմել է 85717 մարդ, ինչը 3212 մարդով կամ 3.6%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 331 մարդով կամ 0.4%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2022թ. հունվարի դրությամբ կազմել է 57923 մարդ, ինչը 3834 մարդով կամ 6.2%-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 4081 մարդով կամ 6.6%-ով պակաս է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)




ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)




Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ




Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինանսավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ




Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2022թ. հունվարին կազմել է 664.5 մլն դոլար, ինչը 250.1 մլն դոլարով կամ 60.4%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 178.9 մլն դոլարով կամ 36.8%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի բացասական հաշվեկշիռը 2022թ. հունվարին կազմել է -166.5 մլն դոլար, ինչը 77.2 մլն դոլարով կամ 86.5%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 34.1 մլն դոլարով կամ 25.8%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2022թ. հունվարին կազմել է 249.0 մլն դոլար, ինչը 86.4 մլն դոլարով կամ 53.1%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 72.4 մլն դոլարով կամ 41%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2022թ. հունվարին կազմել է 415.5 մլն դոլար, ինչը 163.7 մլն դոլարով կամ 65%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 106.5 մլն դոլարով կամ 34.5%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2022թ. հունվարին կազմել է 204307 դրամ, ինչը 11866 դրամով կամ 6.2%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 13295 դրամով կամ 7%-ով ավել է 2020թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2022թ. հունվարին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 60 մլրդ 983.3 մլն դրամ, ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ - 42,821.5 մլն. դրամ, արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ -18,161.8 մլն դրամ: 2021թ. հունվարին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 65 մլրդ 466.3 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -47,338.5 և -18,127.8 մլն դրամ: 2020թ. հունվարին ՀՀ պետական բյուջեի հավելուրդը կազմել է 71 մլրդ 356.7 մլն դրամ, ընդ որում, ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար -57,693.9 և -13,662.8 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ